ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/121

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն
Մասնակից՝ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ՝ Ա. Աղաբաբյանի, Լ. Սահակյանի,
«Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Իհովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ծանրոցների փոխադրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրությամբ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրության հիման վրա, «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 05.05.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/121 համարի ծածկագիրը:

13.05.2021թ.-ին և 04.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.06.2021թ.-ին:

2. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00844995, հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49, էլ հասցե՝ conversinkasacia@mail.ru, հեռ.՝ /010/209048) հրաժարվել է պայմանագիր կնքելուց:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման

ընթացակարգի շրջանակներում «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 05.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

13.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 21-ին հեռախոսազանգի միջոցով <Կոնվերս ինկասացիա> ՍՊԸ տեղակացավ, որ իրականացվում է պետական գնման էլեկտրոնային աճուրդ, որի ավարտին մնացել էր ընդամենը 1 ժամ: Ունենալով մեծ ցանկություն մասնակցել աճուրդին արագ լրացվեց հայտը և բնականաբար հիմք ընդունվեց նաև նախորդ տարիների փորձը (համապատասխան էջը պայմանագրից կցվում է) և աճուրդի տրամաբանությունը առաջարկվեց 1 ուղերթի գին սահմանել 24,000 ՀՀ դրամ գումար: Աճուրդում հաղթող ճանաչվելու արդյունքում առաջարկվեց ստորագրել պայմանագիրը, որից հստակ չէր երևում, որ 24,000 ՀՀ դրամ գումարը վերաբերվում է 1 ուղերթին, բայց միաժամակ հստակ չի երևում նաև, որ այն վերաբերվում է առավելագույնը 6 ուղերթին:

Ըստ աճուրդի տրամաբանության գրված է, որ .... Տեղափոխումը հետևյալ հասցեով ք. Երևան Մելիք-Ադամյան 1-ից մինչև ք.Երևան, Վ. Սարգսյան 6, հետադարձը Վ. Սարգսյան 6-ից Մելիք-Ադամյան 1: Սա նշանակում է 1 ուղերթ, որի համար առաջարկվել է գին:

Ինչ վերաբերվում է պայմանագրի գործողության ընթացքում առավելագույնը 6 անգամ, դա նորմալ պայմանագրային հարաբերություն է, որ կատարողը պլանավորի իր կողմից ստորագրված պայմանագրային պարտավորությունները և որից չի հետևում, որ սպասել մինչև պայմանագրի ավարտի ամսաթիվը և տեսնել, թե քանի անգամ հայտը տրվեց և այդ ժամանակ հաշիվ դուրս գրել: Համաձայն <Հարկային օրենսգրքի> 56 րդ Հաշվարկային փաստաթղթի դուրսգրումը, անվավեր ճանաչումը, չեղարկումը, հոդվածի 4-րդ կետի՝ Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ծառայության մատուցումն ավարտելուց հետո և դա չի

նշանակում, որ պետք է սպասել ևս մի քանի ամիս, տեսնելու համար արդյոք էլի հայտ կներկայացվի, թե ոչ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պայմանագրում պետք է հստակ երևա գործողությունները և դրանց դիմաց վճարները և հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի դրույթները, առաջարկում եմ <Կոնվերս ինկասացիա> ՍՊԸ չներառել գումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/121 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ծանրոցների փոխադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն:

v. 26.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

vi. 27.04.2021թ.-ին «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով էլեկարոնային աճուրդի գնային առաջարկում ընկերության կողմից նշված 24 000 ՀՀ դրամ սակագինը վերաբերվել է

յուրաքանչյուր ուղերթին, սակայն պայմանագրում նշված է ամբողջ տարվա համար: Տեղի է ունեցել վրիպում և նման սակագնով ամբողջ տարվա համար ընկերությունը չի կարող իրականացնել սպասարկում, հետևաբար հրաժարվել է նման տարեկան սպասարկման սակագնով պայմանագիր կնքելուց:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, որի համաձայն՝ մասնակիցը հրաժարվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրությամբ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն

ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ծանրոցների փոխադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կոնվերս

ինկասացիա» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 26.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

26.04.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

27.04.2021թ.-ին «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով էլեկարոնային աճուրդի գնային առաջարկում ընկերության կողմից նշված 24 000 ՀՀ դրամ սակագինը վերաբերվել է յուրաքանչյուր ուղերթին, սակայն պայմանագրում նշված է ամբողջ տարվա համար: Տեղի է ունեցել վրիպում և նման սակագնով ամբողջ տարվա համար ընկերությունը չի կարող իրականացնել սպասարկում, հետևաբար հրաժարվել է նման տարեկան սպասարկման սակագնով պայմանագիր կնքելուց:

Հանձնաժողովի 28.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, որի համաձայն՝ մասնակիցը հրաժարվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6920-2021 գրությամբ «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/121 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կոնվերս ինկասացիա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**